ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարանի մասնագիտական Կրթության և կիրառական մանկավարժության Համահամալսարանակ անսամբլոնի պրոֆեսոր, Մանկավարժական գիտությունների դոկտոր

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ (5–15–ՐԴ ԴԴ.)

Դաստիարակությունը, նրա նպատակն ու խնդիրները, մարդու և հասարակության զարգացման գործում նրա դերի ու նշանակության հարցերը բոլոր ժամանակներում եղել են մտավորականների, ազգային գործիչների և բարձրաստիճան հոգևորականների ուշադրության կենտրոնում: Հասարակության զարգացման այլ ժամանակաշրջաններում այդ հարցերը տարբեր ձևով են լուծվել և տարբեր տեսանկյունից մեկնաբանվել: Հանրային կյանքի բոլոր իրադարձությունները, դասակարգային հակամարտությունները և, առհասարակ, ամեն մի փոփոխություն ներգործում է դաստիարակության վրա, ձևափոխում և կերպափոխում է նրան: Այսինքն, կյանքի փոխակերպումներին համընթաց, ձևափոխվում է նաև դաստիարակության բնագավառը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ պաշտոնական դաստիարակություն, միջնադարյան դպրոց, ավատատիրություն, կացութաձև, բարոյական նորմեր, մատենագիտություն, գաղափար, հայացք, ավանդույթ, սովորույթ, դաստիարակության նպատակ:

Դիտարկվող ժամանակաշրջանում տիրապետող կացութաձևը Հայաստանում ավատատիրությունն էր, հետևապես՝ պաշտոնական դաստիարակությունն իր մեջ պարունակում էր կղերաավատատիրական դաստիարակությանը բնորոշ բոլոր գծերը: Դաստիարակության կարգախոսն էր՝ «ըստ հայրենի ազնվականությանը և ըստ մայրենի աստվածապաշտությանը...»:[1] Ավատատիրական դաստիարակության սկզբունքների մեջ իրականում արտացոլված էին կղերաամիրայական դասակարգի պահանջներն ու տրամադրությունները, որոնցով պայմանավորված էին նաև դաստիարակության բովանդակությունը, առանձնահատկությունները, նպատակն ու խնդիրները: Այսուհանդերձ,կային առանձին իշխանական տներ, օրինակ Մամիկոնյանները, որոնք հայտնի էին իրենց կազմակերպած դաստիարակության համակարգով: Փավստոս Բյուզանդի հավաստմամբ Մամիկոնյան տոհմի սահմանած դաստիարակության նպատակը հայրենիքի համար քաջակորով և քաջասիրտ զինվորի դաստիարակությունն էր՝ «... որ-

1 Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 393:

պես յաջողակք ի գործ պատերազմաց»:[1]

Դաստիարակությունն իրականացվում էր տնային, հասարակական և մասնավոր դպրոցներում: Դաստիարակի պարտականությունն էր երեխաներին խրատել և հրահանգել «ըստ յուրյանց իմաստության և արվեստի»:[2]

Դաստիարակության մտքի պատմության մեջ պետք է շեշտել մի շատ կարևոր հանգամանք. որքան էլ որ իշխող դասակարգի ձեռքում լիներ դաստիարակության առաջնորդությունը, այնուամենայնիվ, ժողովուրդը դաստիարակության մեջ ուներ իր ազդեցիկ տեղն ու դերը: Նա իր ավանդույթները, սովորույթները, բարոյական նորմերն ու օրենքները խնամքով պահպանում և դրանք կանոնավոր ձևով փոխանցում էր սերնդեսերունդ:Սա ազգային դաստիարակության բնորոշ առանձնահատկություններից մեկն էր:

Դեռևս հնում հայերը, բարձր գնահատելով դաստիարակության անսահմանափակ հնարավորություններն ու առավելությունները, մեծ տեղ էին վերագրում նրան, քանի որ գիտակցում էին, որ դաստիարակությունը կարող էր և իրական մարդ ստեղծել, և նաև գազան ծնել, որովհետև «Կայենը մարդ էր, բայց մարդասպան դարձավ», կամ «Մարդը լավ է, բայց վատ դաստիարակությունը նրան դարձնում է զզվելի»:[3] Այսպիսին էր դաստիարակության մասին պատկերացումները վաղ միջնադարի մտածողների հայացքներում:

Բերենք մի շատ կարևոր պատճառաբանություն ևս. մինչև 17- րդ դարը Հայաստանում դպրոցի, դաստիարակության, ուսուցման և կրթության հարցերը զարգացել են որպես փիլիսոփայական և մանկավարժական փոխկապված գաղափարների և հայացքների ամբողջություն: Դրանցում կրոնական և փիլիսոփայական հարցերի հետ միասին կարծիքներ և տեսակետներ են մշակվել նաև մանկավարժական տարբեր հարցերի վերաբերյալ, որոնք, ինչ խոսք, կրում էին հատվածական և ընդհանրական բնույթ:

Մինչդեռ, մեր թվագրությունից շատ առաջ հայերն ունեցել են ինքնաշեն գործիքներ և դրանք պատրաստող արհեստանոցներ: Միջնադարի հայոց մի շարք քաղաքներ ունեցել են ջրմուղներ, թրծած կավե և երկաթե խողովակներով հեռու վայրերից բերվող աղբյուրների ջրերով լեցված հսկայական ջրամբարներ: Այս բոլորի առկայության պայմաններում, կարծում ենք, միանգամայն ստույգ են դառնում պատմական այն վկայությունները, որ այդ ժամանակներում Հայաստանում կային կրթական և մշակութային բազմաթիվ հաստատություններ՝ տարբեր բնույթի և աստիճանի, ընդհուպ մինչև միջնադարյան բարձր տիպի դպրոցներ: Հայաստանի ձիարձակարաններում և հրապարակներում տեղի էին ունենում մարմնամարզական վարժություններ ու խաղեր, թատերական, երաժշտական ու պարային հանդեսներ: Արվեստն ու սպորտը, բազմաթիվ այլ գիտելիքների հետ, ուսուցանվում էին հրապարակներում՝ հանդիսային դաստիարակության պայմաններում:

Չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ, դեռ հնագույն ժամանակներից սկսած հայերը միշտ էլ ունեցել են տարաստիճան և տարատեսակ դպրոցներ, որոնք շարունակաբար հաջորդել են միմյանց և ավելի քան երկու հազար տարի երբեք չեն դադարել գործելուց և շարունակում են գործել նաև այսօր:

Հայ ժողովուրդը լինելով մի՝ «ածու փոքր», դարեր շարունակ ապրելով պատմական դժնդակ պայմաններում, դպրոցագիտության ասպարեզում նույնպես հասել է այնպիսի բարձունքների և հատկապես իր ժամանակի համար առաջավոր մանկավարժական գաղա-

1 Փավստոս Բյուզանդ, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 67:

2 Նույն տեղում, էջ 338:

3 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 728, էջ 287- 290:

փարների, որին քաղաքակիրթ այլ ժողովուրդներ հասել են շատ ավելի ուշ:

Հայ ժողովրդի և նրա արժանավոր զավակների դարավոր ձիգերն ու ջանքերն իրենց դպրոցի և մատաղ սերնդի դաստիարակության համար, եղել են ազգի գոյաբանության պայքար, քանի որ դպրոցն ու դաստիարակությունը դիտվել են ազգի լինելության և ամբողջականության անհրաժեշտ նախապայմանը, և որքան ծանր են դարձել պատմական հանգամանքները, այնքան աննկուն և տոկուն է ժողովուրդը պայքարել իր դպրոցի համար:

Ի՞նչ կարող է տալ միջնադարն այսօրվա դպրոցին և դաստիարակության գործին. մի հարցադրում, որ դեռևս 20-րդ դարի սկզբներին մտահոգել է ինչպես Կոմիտասին, երբ նա մշակում էր հայ ժողովրդական երգն ու երաժշտությունը, այնպես էլ Թորոս Թորամանյանին, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին և այլոց, երբ մեկը ճարտարապետության, իսկ մյուսը քանդակագործության և մանրանկարչության մեջ փորձում էին միջնադարյան մշակույթի ակունքներում գտնել այն, ինչը հայադրոշմ էր: Որպես բանագետ – բանահավաքներ այդ ուղղությամբ վիթխարի աշխատանք են կատարել նաև Գարեգին Սրվանձտյանցը, Ղևոնդ Ալիշանը և ուրիշներ, ովքեր ջանացել են հայ հին բանաստեղծության և ժողովրդական բանահյուսության մեջ որոնել ու գտնել այն՝ ինչը կրում էր ազգային հետքը, կնիքն ու նշանը: Այսօրինակ մանրակերտ աշխատանքներ, կարծում ենք, պետք է կատարել նաև դաստիարակության բնագավառում, հատկապես երբ նախաձեռնվում են հայեցակարգային նորացումներ ու բարեփոխումներ:

Եվ այսպես, տեղափոխվենք միջնադար, փորձենք ամփոփ ներկայացնել այդ ժամանակաշրջանի հասարակական և մշակութային կյանքում նշանակալից հետք թողած հայ մեծանուն մտածողներին, դիտարկենք նրանց հայացքները, վեր հանենք նրանց ձեռքբերումները, մասնավորապես, դաստիարակության բնագավառում:

5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումը և ժողովրդական դպրոցների բացումը նպաստեցին նոր սերնդի դաստիարակության և զարգացման վերելքին: 5- 15-րդ դարերում հիմնվեցին բազմաթիվ կրթօջախներ. Սյունիքում՝ Տաթևի, Գլաձորի, Անիի, Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի, Արարատյան նահանգում՝ Վաղարշապատի, Խոր- Վիրապի, Երասխաձորի, Թեղուտի, Այրիվանքի, Շիրակի նահանգում՝ Հոռոմոսի, Մարմաշենի, Արգինայի, Վանանդի, Վասպուրականում՝ Վարագա վանքի, Նարեկա վանքի, Կողուց վանքի, Խիզանի և այլ դպրոցներ: Վերոնշյալ դպրոցներում տարբեր ժամանակներում դասավանդել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Եզնիկ Կողբացին, Գրիգոր Նարեկացին և ուրիշներ:

Դրանք առաջին հայագիր- հայալեզու դպրոցներն էին, որտեղ ուսուցումը տարվում էր ժողովրդական երգերի, հոգևոր քարոզների, շարականների և աղոթքների միջոցով: Սովորեցնելով այբուբենը Մաշտոցն իր աշակերտներին պատրաստեց նաև որպես թարգմանիչներ և ինքնուրույն գրքերի հեղինակներ: Կարճ ժամանակամիջոցում ինքը, Սահակը և նրանց աշակերտները ոչ միայն թարգմանեցին Աստվածաշունչը և եկեղեցական բազմաթիվ գրքեր, գիտական, փիլիսոփայական մեծարժեք երկեր, այլև հիմք դրեցին ազգային ինքնուրույն մատենագրության՝ հանձինս Կորյունի, Փավստոսի, Ագաթանգեղոսի, Եզնիկի և այլոց: Այս բոլորը փառակերտեցին 5-րդ դարի առաջին կեսի թարգմանական, գրական, լուսավորական և մանկավարժական շարժումը և պարարտ հող ստեղծեցին հետագայի այնպիսի գործիչների արգասաբեր գործունեության համար, ինչպիսիք էին Մովսես

Խորենացին, Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Թովմա Արծրունին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը և ուրիշներ: Այդ շրջանում ճանաչում գտան նաև Սբ. Առաքելոց, Հնգոց- Կարմիր, Խլաձորի Սբ. Գրիգոր վանքերն իրենց դպրանոցներով: Մատենագրության և թարգմանչական դպրոցի զարգացմանը համընթաց վերելք էին ապրում նաև փիլիսոփայական, կրոնա – բարոյական և դաստիարակագիտական միտքը, որի ականավոր ներկայացուցիչներից մեկը հունաբան դպրոցի փիլիսոփա և նոր պլատոնականության գաղափարակիր Դավիթ Անհաղթն էր: Ըստ նրա հայեցաբանության, մարդը բնության մի մասնիկն է, հետևապես նրա զարգացումը պետք է ընթանա բնահամապատասխանության օրենքի համաձայն: Նա կարևորում էր դաստիարակության դերը, միաժամանակ պահանջում էր հաշվի առնել նաև «նախապես շնորհված» ժառանգական հատկանիշների և միջավայրի դերն անձի զարգացման գործում: Ըստ Դավթի, փիլիսոփայությունը մարդկային հոգու զարդն է, այն իր տեսական հիմքում որոնում է ճշմարտության իմացություն բանական և ոչ բանական աշխարհում, իսկ գործնական հիմքում՝ բարու իմացություն և կատարում է բարին բանական աշխարհում: Հոգու երկու հիմքերի և փիլիսոփայության երկու կողմերի համեմատման ու հակադրման հարաբերակցության եզրագծում Դավիթը բարին վերադասում էր ճշմարտությունից:[1] Ելնելով այս տեսանկյունից անվանի փիլիսոփան դաստիարակությունը դիտարկում էր որպես միջնորդ օղակ երեխային ինքնաճանաչողության հասցնելու գործում: Դաստիարակության միջոցով պետք է օգնել երեխային, որպեսզի նա ձգտի դեպի բարին և «զսպի անցանկալին», որը «փախուստ է չարեաց և ... զհարդ պարտ է քաղաքավարիլ»:[2] Երեխայի համակողմանի դաստիարակության գործում նա կարևորում էր նաև աշխատանքի դերը՝ այն համարելով մաքրագործման հրաշալի միջոց, միևնույն ժամանակ բարձր էր դասում դաստիարակ – ուսուցչի բարոյական նկարագիրը երեխայի դաստիարակության գործում:

Միջնադարի բարձրաստիճան հոգևորական մտավորականներից խոշորագույնը Գրիգոր Նարեկացին է, որը գրականության և մշակույթի մեջ իր ստեղծագործությամբ բացեց նոր հազարամյակ: Նարեկացուց մնացել են տարբեր ժանրի մեծ թվով գործեր, որոնց շարքում ընտրագույնը նրա տաղերն են և «Մատյան ողբերգության» պոեմը: Տաղերում քնարաշունչ արվեստով գովերգվում են բնության և մարդու գեղեցկությունը: Դրանք արտացոլում են 10–րդ դարի հայ հասարակության մեջ առաջացած հումանիստական հակամետությունները և տրամաբանությունը նաև մարդու մտածողության և նրան պարուրող իրական աշխարհի լինելության և գոյատևության գեղարվեստական արժևորումներով: Նարեկացու տաղերի, որպես երաժշտական և բանաստեղծական անթերի իրողությունների վերականգման համար, ժամանակին վիթխարի աշխատանք է կատարել Կոմիտասը՝ ընծայելով դրանցից չորսի հրաշագեղ մեկնությունները:

«Մատյան ողբերգության» պոեմում մարդու ներաշխարհի, նրա խոհերի և ապրումների պատկերներն իրենց գեղարվեստական մշակվածությամբ ու զգացմունքային խորությամբ հասնում են գերագույն ուժգնության և կատարելության: Նարեկացին փառաբանում է մարդու ֆիզիկական և հոգևոր գեղեցկությունն՝ իբրև արարչագործության անթերիության և ամբողջականության արտերևույթ: Գիտակցել աստծո մեծագործությունը, սակայն թերագնահատել նրա սերն ու ներողամտությունը, նրա

1 Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայանք, Ե., 1980, էջ 85:

2 Նույն տեղում, էջ 170:

նախագծերի կատարելությունը, նշանակում է տարակուսել, կասկածել նրա մեծությանը: Նարեկացին մեկն էր , որ մարդու ձեռքով կատարված սրբապիղծ, անմաքուր և անօրեն աշխարհի խնդիրները չէր բեռնում աստծո վրա, այլ հույս էր հայտնում, որ մարդն ի վերջո կդառնա «աստծո սուրբ երեսին»: Նա իր պոեմում անբացատրելի հուզականությամբ ողբում էր ժողովրդի անհավատ վիճակը, նրա անդառնալի կորստյան սարսափը՝ օրհներգելով աստծո փրկարար ձեռքն իր ժողովրդի վրա, քանի որ աստծո փրկարար ձեռքը ցրում է խավարն ու խաբկանքը մարդկանց մտքերից, մխիթարում վշտահար սրտերը և դառնում քավարան բոլոր մեղքերի: Նարեկացու համար աստված կատարելության խորհրդանիշ է : Նա ձգտում էր հասնել աստծոն և իր մարդկային բնությունն ամբողջովին միաձուլել նրա աստվածային էությանը, և դեռ ավելին, նա համոզված էր, որ մարդը կարող է մինչև իսկ աստված լինել.

Եվ այն, ինչ ասելն ահավոր է,

Գրում եմ այստեղ ես ի հիշատակ երախտիքիդ,

Կարող ենք լինել մենք աստված նույնիսկ՝ շնորհներով ընտիր....:[1]

Նարեկացու հումանիզմն այնքան խորն էր և անպարագիծ, որ միջնադարի խավարում համարձակվում էր մարդուն հասցնել և նույնիսկ նրան հավասարեցնել աստվածային բարձրության: Ահա թե ինչու այստեղից են սկիզբ առնում բանաստեղծի ողբերգական ապրումները, կասկածներն ու տարակույսները. իսկ ինքը կարո՞ղ է միանալ աստծոն, աստված դառնալ,երբ իր մեղքերն օրավուր աճում և մեծ չափերի են հասնում, մինչդեռ աստծոն հասնելու համար մարդը պետք է մաքրագործվի, զերծ լինի ամեն տեսակ աղտեղությունից, ապականությունից և բարոյական այլասերումից:

Մարդու մասին ունեցած նրա հայացքները, պատկերացումներն ու խոհերը, նրա հուզաշխարհի հարուստ հոգեբանական վերլուծությունները Նարեկացուն հռչակում են հայ դաստիարակագիտության մտքի պատմության մեջ նոր շրջանի սկզբնավորողը:

Նարեկացին անչափ սիրում էր կյանքը և մարդուն: Մարդկային արատների նրա անողոք անարգելու, խարազանելու նպատակը ամենևին էլ մարդու մասին մերժողական, ժխտողական, նրան նսեմացնելու միջնադարյան հնահավաք պատկերացումներ չէին: Իրական և համոզիչ գծերով նա սահմանում էր մարդու վարքագիծը, գեղարվեստական նուրբ շեշտադրումներով կերտում նրա բարոյական նկարագիրը, պատճառաբանում նրա էությունն ու մարդկային բնութագիրը: Նրա տրամաբանությամբ, կյանքի շարժիչ ուժը դաստիարակության միջոցով բոլոր ուղղություններով ու կողմերով «անթերի և մաքուր», նաև «ողբերգական հակասություններից, կասկածներից ու տարակույսներից զերծ» մարդկային վեհ կերպարի ստեղծումն է: Նարեկացու անպարփակ բարձրության հասնող հումանիզմը և մարդ – արժեքային համակարգի նրա գաղափարախոսությունը մեզանում պետք է դառնա ժամանակակից մարդաբանական գիտությունների, նաև դաստիրակության մեթոդաբանական հիմքերից մեկը: Ինչպես նարեկաբուժությունը, որն այսօր հրաշքներ է գործում, դարձել է բժշկագիտության բնագավառ, այնպես էլ այն պետք է մտնի մանկավարժության ոլորտ և դառնա ժամանակակից դաստիարակության փիլիսոփայություն և բարոյական դաստիարակության օրինագիրք:

Հայ միջնադարյան մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի ականավոր գիտնական, փիլիսոփա, գրող և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Նա հայ իրականության մեջ մեծարվել և փառաբանվել է որպես լուսավորության մուներեիկ և գիտության հիմնադիր: Մա-

1 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985, էջ 453:

գիստրոսը գրական գործունեության զուգընթաց ծավալել է նաև լուսավորական գործունեություն՝ հիմնադրելով կրթադաստիարակչական կենտրոններ՝ դրանով միաժամանակ նպաստել կրթության և գիտության զարգացմանն ու տարածմանը: Նա ստեղծել է բարձր տիպի մասնավոր – շրջիկ ճեմարան, որն, ըստ էության, նրա հետ շրջել է Հայաստանի գրեթե բոլոր գավառներով, որտեղ հանգամանքների և քաղաքական դեպքերի բերումով տեղափոխվել է ուսուցչապետ – գիտնականը:

Մագիստրոսը ստեղծել է ամբողջական կրթական մի ծրագիր, որտեղ առավել մեծ տեղ էր հատկացվում աշխարհիկ գիտություններին և դրանց դաստիարակչական հնարավորություններին: Նա պահանջում էր կրոնական կրթությունն ամբողջացնել տարատեսակ աշխարհիկ գիտելիքներով: Մագիստրոսն իր ժամանակակիցներից տարբերվում էր, երբ անդրադառնում էր գիտության, իմաստասիրության, դաստիարակության և կրթության հարցերին: Նրա ասույթներից, նամակներից և թղթերից հստակ երևում է, որ նա քաջատեղյակ էր իր ժամանակաշրջանի գիտական և մանկավարժական նվաճումներին: Էականն ու որոշիչը, ըստ նրա, ոչ թե աշխարհի զգայական ճանաչումն էր , այլ բանական ճանաչողությունը: Եթե աստվածային էության մասին խոսելիս նա պնդում էր, թե «մերձենալ աստծոն հույժ բարի է», ապա իսկույնևեթ պատճառաբանում էր՝ «չկա մերձենալու ավելի դյուրին միջոց, քան գիտությամբ հոգին լուսավորելը»:[1] Մագիստրոսի նամակներում և թղթերում մեծ տեղ են գրավում նրա ուշագրավ դատողությունները, մտքերն ու ասույթները բնագիտության, բժշկագիտության, տիեզերագիտության, մանկավարժության և այլ գիտությունների մասին:

Միջնադարի մտածողների շարքում իր արժանապատիվ տեղն ունի Ամենայն հայոց կաթողիկոս, դիվանագետ, հրապարակախոս, երգահան և մանկավարժ Ներսես Շնորհալին, որն իր խրատական – ճանաչողական բանաստեղծություններով, հանելուկներով, քնարական և քերթողական ստեղծագործություններով նոր շունչ հաղորդեց և նորամուծություններ բերեց նաև մանկավարժության բնագավառում: Ինչպես հատուկ էր միջնադարյան մեծանուն գործիչներին՝ Շնորհալին նույնպես տարիներ շարունակ զբաղվել է ուսուցչությամբ, կրթել ու դաստիարակել ուսուցիչների, երաժիշտների, նկարիչների և հոգևոր գործիչների բազմաթիվ սերունդներ:

Շնորհալին գրականության նպատակն ու կարևորությունը տեսնում էր ժողովրդի բարօրությանը ծառայելու, «նիրհած հոգիներն» արթնացնելու, մարդկանց կրթելու և դաստիարակելու մեջ: Ընթերցողի հոգում նա փորձում էր վերակենդանացնել անցյալի նվիրական և սրբազան զգացումներ, որոնք դաստիարակչական վիթխարի նշանակություն ունեին ժամանակաշրջանին բնորոշ խնդիրների լուծման համար: 1166 թվականին նա հրապարակեց ժողովրդին ուղղված «Թուղթ ընդհանրականը»՝ կենցաղային – ընտանեկան խրատներ տալու և կրոնական, դավանաբանական և ազգային հարցեր մեկնաբանելու նպատակով:

Շարունակելով Նարեկացու ստեղծագործական ավանդույթները, Շնորհալին նույնպես շռայլորեն օգտվում էր ժողովրդական բանահյուսությունից, այնտեղից քաղելով անսպառ օգտակար նյութ: Մանկավարժության մեջ նորամուծություն էր նրա դաստիարակչական–ճանաչողական բնույթի ոտանավորները, որոնց կրթադաստիարակչական արժեքն անչափ մեծ էր: Դրանց միջոցով նա տարատեսակ խորհուրդներ և օգտակար գիտելիքներ էր հաղորդում ընթերցողին: Ոտանավորները հիմնականում նա գրում էր կարճ տողե-

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 97:

րով, որպեսզի մտապահելը հեշտ լիներ մանուկներին: Նրա գրեթե բոլոր ստեղծագործություններն ունեն բարոյախրատական և դաստիարակչական ուղղվածություն: Իր երկերում նա մշտապես ձգտում էր սերմանել սեր դեպի ուսումը, գիտությունը, ձևավորել բարձր բարոյականություն, համեստություն, չափավորություն, խթանել հոգեկան աշխարհի ներդաշնակ զարգացում ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների շրջանում: Դաստիարակչական տեսակետից հիշարժան է «Խրատ ուսումնական մանկանց» շարքը, որը հիմնականում գրված է մանուկների համար: Սա առաջին մանկավարժական գիրքն է, որի միջոցով Շնորհալին բացի գրաճանաչություն ուսուցանելուց, լուծում էր նաև դաստիարակության բազմաթիվ խնդիրներ: «Խրատներ» - ում հաշվի են առնվել երեխաների մտավոր կարողություններն ու նրանց տարիքային առանձնահատկությունները: Նա պահանջում էր երեխաների դաստիարակությունը սկսել վաղ տարիքից, խրատել և նրանց մատաղ հոգում սերմանել բարության, մարդասիրության, ազնվության, արդարամտության ծիլերը: Նա բարձր էր գնահատում բարոյական և հոգևոր արժեքները, ազդարարում էր, որ բոլոր չարիքների արմատը ագահությունն է, իշխանավորներին խորհուրդ էր տալիս նյութական արժեքներ դիզելու փոխարեն, զբաղվել ազգօգուտ և բարի գործերով, հետևել առաքինի և բարեպաշտ մարդկանց օրինակին, ովքեր իրենց կյանքը նվիրաբերում են ժողովրդի և պետության բարեկեցությանն ու բարգավաճմանը:

Իր աշխատություններում բարոյական և իրավագիտական դաստիարակության հարցեր է քննարկել Մխիթար Գոշը, ով խաղաղություն և համերաշխություն էր քարոզում, դաստիարակներից պահանջում էր վաղ տարիքից երեխաներին վարժեցնել բարեգործության և գթասրտության, սովորեցնել նրանց ուրիշներին հարգելու և սիրելու բարեմասնություն:

Նրա երկերից բացառիկ արժեք են ներկայացնում Դատաստանագիրքը և առակների ժողովածուն: Դատաստանագրքի բովանդակային հիմքում դրված է կամքի ազատության գաղափարը: Գոշը մերժում է մարդու մեղսալիության և մեղավորության, նրա արարքները նախախնամության կողմից պատճառաբանված լինելու միջնադարյան հակամարդկային պատկերացումները և նոր արժեքային համակարգ մշակում մարդու և նրա իրավունքների մասին: Նա հանդես է գալիս որպես առաջադեմ մտածող և մեծ հումանիստ: Դատաստանագրքի ստեղծման նպատակաբանությունը և գործնական նշանակությունը միջնադարի խավարում առաջադիմական հզոր քայլ էր, պայծառ մտքի արգասիք. այն ներկայացնում էր համամարդկային մեծ արժեք:

Միջնադարյան մշակույթի բարձրարժեք հուշարձան է նաև Գոշի առակների ժողովածուն, որտեղ այլաբանորեն դարձյալ մարդն է՝ իր կեցության, կյանքի պայմանների և տրամադրությունների առանձնահատկություններով: Առակը տվյալ դեպքում հեղինակն օգտագործում է որպես դաստիարակչական - հրապարակախոսական միջոց, որտեղ մեծարվում և գովերգվում են առաքինությունները, անարգվում և պախարակվում թերությունները, ծաղրաբանվում հիմարությունն ու տգիտությունը, խարազանվում չարն ու չարիքը:

Միջնադարի մտածողներից Հովհաննես Երզնկացու մասին պահպանվել են ավանդապատումներ, որոնք նրա անունը կապում են այլազան հրաշագործությունների հետ: Դեռ կենդանության օրոք նա փառաբանվել է «սուրբ և իմաստուն», «բանիբուն և աշխարհալույս վարդապետ» և այլ պատվանուններով: Նրա գերեզմանը համարվել է սրբատեղի:

Իր փիլիսոփայական և մարդաբանական հայացքներով Երզնկացին մոտենում էր Դավիթ Անհաղթի հայե-

ցաբանությանը: Աշխարհի ճանաչման նախապատճառը նա համարում էր զարմանքը, սքանչացումը, իսկ միջոցը՝ զգայական ընկալումը: Նրա ստեղծագործությունները խորհուրդ են կրթության, գիտության, ընտանիքի, կենցաղավարության, բարքերի, սովորույթների, նիստուկացի, առաքինության և բարոյականության մասին:

Մանկավարժության մեջ արժևորվում են նրա մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Ուսուցման մեջ նա առաջ է քաշում ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդների համաձայնեցված կիրառման անհրաժեշտությունը: Ընդլայնելով միջնադարում լայն տարածում գտած խրատական – դաստիարակչական ոտանավորի բնագծերը, Երզնկացին հորինում է խոհա – խրատական, իմաստաբանական բանաստեղծություն՝ քառյակների տեսքով, որոնք պատգամ են ուսման, ընտանիքի և կենցաղի բարոյակրթման, արդարամտության, բարոյականության. դրանք ծառայում են միևնույն նպատակին՝ դաստիարակել, լուսավորել ժողովրդին, մաքրազերծել հասարակությունը արատներից, վերացնել չարիք ծնող պատճառները՝ տգիտությունը, անկրթությունն ու վատ բարքերը:

Նրա խորհուրդներն ու պատվիրաններն ուղղված են հասարակության գրեթե բոլոր խավերին՝ աղքատ թե՛ հարուստ, ծառա թե՛ իշխան, երիտասարդ թե՛ ծեր, մանուկ ուսումնական, թե՛ ուսման կարոտ: Նա իր երկերում զարգացնում է այն գաղափարը, որ ամեն ինչ անցողիկ և ժամանակավոր է, ունի ինչպես սկիզբ, այնպես էլ վախճան, մինչդեռ գիտելիքը մնայուն արժեք է և աշխարհի բարօրությունը ճաշակելու կենսարար աղբյուր: Հետաքրքրական են հատկապես նրա փիլիսոփայական և մարդաբանականական հայացքները և ժամանակաշրջանի հասարակական և քաղաքական իրադարձություններին, կենցաղին, բարքերին, ծեսերին վերաբերող հարուստ տեղեկությունները:

Կանոնադրական և կրթադաստիարակչական բարձր արժեք ունի 1280 թվականին նրա գրած «Սահման և կանոնք» աշխատությունը, որտեղ դաստիարակության տարաբնույթ խնդիրների հետ արծարծվում են նաև «տղայահասակ մանկանց աշխարհականացման» հարցեր: Նա պահանջում է երեխաներին դաստիարակել այնպես, որ նրանք հարգալից վերաբերմունք ունենան ավագների, իրենց ծնողների և ուսուցիչների հանդեպ, լինեն պարկեշտ, գթասիրտ և աջակից թույլերին և կարիքավորներին:

Միջնադարյան բարոյախոս հումանիստների ստեղծագործություններում այս բնույթի խրատներն ու կարգասիրության և օրինապահության կանոնները նշանակալից տեղ են գրավում: Դրանց մեջ արժեքավորն այն է, որ նրանցից շատերը ոչ միայն առաջադրել են դաստիարակության հիմնահարցեր, այլև մշակել են գործնականում դրանց իրականացման հնարավոր ուղիներն ու միջոցները: Սա միջնադարյան դաստիարակության էական առանձնահատկություններից մեկն է:

Դաստիարակության առաջնակարգ հիմնահարցերից մեկը, որը ներկայացվել է միջնադարի գրեթե բոլոր մտածողների կողմից, այն է, որ դաստիարակությունը պետք է սկսել մանկության ամենավաղ շրջանից, երբ վատ սովորույթներն ու արատները տակավին տեղ չեն գտել մանկան կյանքում, երբ մանուկը չի կրել օտար և խորթ ազդեցություններ, երբ չի ապականվել նրա մանկական անմեղ հոգին:

Պահանջվում էր դաստիարակության հիմքը կառուցել գեղեցիկ և առաքինի գաղափարներով, խոհեմ և իմաստուն հասկացություններով ու արարքներով: Առաջարկվում էր նաև, ձեռք առնել կանխարգելիչ բոլոր միջոցները, որպեսզի ոչ մի մոլորություն և գայթակղություն չսողոսկի մանկան էության մեջ, չարության ոչ մի սաղմ չծլի նրա դյուրահավատ հոգում, իսկ եթե ծլի, ապա ինչ գնով էլ լինի արմատախիլ անել այն:

Առաջ էր քաշվում բոլոր ժամանակների համար միշտ արդիական երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքը, առաջադրվում էր երեխայի ընդունակությունների և կարողությունների համապատասխան նրան հանձնարարել համարժեք դաստիարակչական խնդիր և ուսումնական նյութ:

Առհասարակ, մարդկանց կրթելիս և դաստիարակելիս պահանջվում էր նկատի ունենալ նրանց տարիքը, գիտելիքների աստիճանը, սեռերի տարբերությունը և այլ հանգամանքներ: Այս պահանջը միջնադարյան Հայաստանում օրենքի ուժ էր ստացել և հռչակվել էր որպես պարտադիր կանոնակարգ՝ այն ամենուրեք կիրառելու համար:

Գրիգոր Տաթևացու և Առաքել Սյունեցու «Սահմանադրություն դաստիարակության նորածնյալ մանկանց» կանոնադրական աշխատությունը 14 – րդ դարի հայ մանկավարժական գրականության մեծարժեք հուշարձաններից մեկն է: Գրքում Տաթևացին առաջ է քաշում ժամանակակից կյանքին վերաբերող խնդրահարույց շատ հարցեր և փորձում է դրանք լուծել դաստիարակության միջոցով: Նա ծնողներին և դաստիարակներին հորդորում է երեխաների մեջ սերմանել բարոյական դրական հատկանիշներ, պարսավանքի ենթարկել ծույլերին, աշխատանքն անարգողներին, հետևողականորեն նրանց սաստել, հանդիմանել այնքան ժամանակ, քանի դեռ դաստիարակը չի համոզվել, որ նրանք իրականորեն ուղղվել են: Գրքում դատապարտելի և գարշելի են համարվում զազրախոսները, ստախոսները, խոսք տանող բերողներն ու գողերը, որոնք պետք է ենթարկվեն ոչ միայն անարգանքի, հանրային պարսավանքի, այլ նաև խիստ պատժի: Ծնողներն ու դաստիարակները պետք է նրանց մեջ դաստիարակեն հավատ և բարեպաշտություն, հաղորդեն գիտելիքներ և վաղ հասակից նրանց վարժեցնեն գյուղատնտեսության և արհեստների մեջ, որպեսզի հետագայում նրանք աշխատեն, նյութապես լինեն ապահով և չդիմեն գողության: Հետամուտ լինել, որպեսզի երեխան չդառնա շատախոս և դատարկախոս, իսկ, ամենակարևորը, չլինի ստախոս:

Տաթևացին պահանջում էր ամեն կերպ խուսափել պատիժներից, բայց միաժամանակ պատվիրում էր, երբ պետք է պատժել, ապա՝ լինել հետևողական և արդարամիտ, չդրսևորել ո՛չ ավելորդ բարեհոգություն և ո՛չ էլ խստություն, գիտակցել, որ պատիժը նույնպես ունի իր չափը, ո՛չ թուլությունն է օգտակար և ո՛չ էլ անչափ խստությունը:

Գրքի տարբեր կանոններում Տաթևացին խարազանում է բանսարկությունը, քսությունը, զազրախոսությունը, շատախոսությունն ու թափառաշրջիկությունը: Այսպես, 8–րդ կանոնի մեջ նա պատվիրում է . «զի մի լիցի շատախոս և շատաշրջիկ»:[1] Չարն ու չարիքը նա համարում էր դժբախտություն, իսկ դրանց իրավական և բարոյական հետևանքը՝ աղետ ու մահ:

Միջնադարյան որոշ մտածողներից Տաթևացին առանձնանում է նրանով, որ նրա հայացքներում ցայտուն մատնանշվում է տեսական ու գործնական գիտելիքների կապի սկզբունքը: Թե՛ գիտելիքները և թե՛դաստիարակության իր մշակած կանոնները նա սովորեցնում էր ոչ միայն «բանիվ իմացում», այլ նաև «գործով կատարյալ», այսինքն, ոչ միայն խոսքով ընդունելի, այլ նաև գործնականում կիրառելի:

Որպես իր ժամանակաշրջանի մեծ մանկավարժ, Տաթևացին մարդու զարգացման գործում ընդունում էր դաստիարակության առաջատար դերը: Նա իրավացիորեն պատճառաբանում էր, որ երեխան պատրաստի առաքինություններով չի ծնվում, նա ձևավորվում

1 Գրիգոր Տաթևացի, Սահմանադրություն դաստիարակության նորածնյալ մանկանց, 8 – րդ կանոն:

է իր ապրած միջավայրում, հետևապես՝ դաստիարակությունը պետք է հաշվի առնի այդ միջավայրի ազդեցությունները և ըստ այդմ կազմակերպի դաստիարակության գործը: Նա պաշտպանում էր՝ այսօր էլ ընդունելի այն տեսակետը, որ մարդն ունի ժառանգական (բնական) և ձեռքբերովի (շնորհական) հատկանիշներ, որոնք հնարավոր է զարգացնել դաստիարակության միջոցով:

Հայոց հին մատենագրությունը լի է Տաթևացու մասին գովեստներով և հիշատակություններով: Առանց վերապահումների ժամանակակիցները նրան փառաբանել են որպես մեծ մարդու, հասարակական և եկեղեցական բարձրաստիճան գործչի, իր ժամանակի համայնագետ գիտնականի, բարձրագույն կրթության փայլուն կազմակերպչի. նա մեծարվել է նաև՝ «Դաստիարակ ամենայն հայոց» տիտղոսով:

Ամփոփելով, մեկ անգամ ևս վերհիշենք, որ մեր թվագրության 4 -րդ դարից սկսած վաղ միջնադարյան Հայաստանում սահմանված կանոնների և օրենքների մեջ շոշափվել և քննարկվել են նաև դպրոցի և դաստիարակության հարցեր, իսկ 1242 թվականին Կիլիկիայի Սիս քաղաքում գումարված ժողովում հաստատվեցին Կոստանդնի կանոնները և դրանք այսուհետ ստացան օրենքի ուժ:[1]

12-15-րդ դարերում որոշակիորեն ամրագրվեցին դպրոցի և դաստիարակության կանոնադրական հիմքերը: Այդ դարերից սկսած հայերն արդեն ունեցել են պաշտոնական օրենսդրություններ, որոնց մեջ ներառվել են առանձին հոդվածներ դաստիարակության մասին, որտեղ բազմաթիվ հարցերի հետ առաջադրվել է նաև որբ և կարիքավոր երեխաների անվճար ուսուցման և դաստիարակության անհրաժեշտության խնդիրը:

Դաստիարակության և կրթության ժամանակակից օրենսդրական-նորմատիվ փաստաթղթերի մշակման համակարգում, կարծում ենք, առաջնակարգ կարևորություն ունի նաև միջնադարում ստեղծված կանոնադրական-օրենսդրական վավերագրերի ուսումնասիրությունը:

Օրենքի ուժ ստացավ դարերի ընթացքում ձևավորված այն մոտեցումը, առ այն, որ մարդու բարոյական վարքի և բնավորության ձևավորման գործում միայն կանոնադրությունների և օրենքների առկայությունը, նաև՝ դպրոցի, դաստիարակների և ուսուցիչների ուժերը թեև շատ կարևոր են, սակայն բավարար չեն: Ուստի՝ դաստիարակությունը հռչակվեց համազգային գործ, որին պետք է մասնակցեր ամբողջ ժողովուրդը, իսկ առաջին հերթին նրա մտավոր ներուժը: Դա ցայտուն վկայությունն էր այն բանի, որ դաստիարակության գործում ժողովուրդն ունեցել է իր պատրաստակամ դերն ու մասնակցությունը և նրա ջանքերի շնորհիվ դաստիարակության մեջ ներմուծվել են բազմաթիվ հետաքրքրական և առաջավոր գաղափարներ:

Միջնադարյան մտածողների հայացքներում առկա են դաստիարակության առաջադեմ սկզբունքներ, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման արդյունավետ ձևեր ու մեթոդներ, որոնք ուշագրավ են ինչպես իրենց ինքնատիպությամբ, այնպես էլ մնայուն և հաստատուն արժեքներով: Թերևս դա է պատճառը, որ դրանք դարեր շարունակ պահպանվել են դաստիարակության մեջ, մեր կենցաղում և այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունն ու հրատապությունը:

Միջնադարի հայոց երևելի մտածողներն իրենց սրբագործված կյանքով ու գործով, մանկավարժական իրենց գործունեությամբ և արժեքային կողմնորոշումներով ազգային անանցողիկ մեծություններ են՝ հավերժ ընդօրինակման ու մեծարման: Նրանց կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը տիպական և բնորոշ օրինակ է այսօրվա և գալիք սերունդների համար:

1 Տե՛ս Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914 թ. :

ФИЛОСОФСКИЕ И АНТРОПОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ВОСПИТАНИЯ ВО ВЗГЛЯДАХ АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ МЫСЛИТЕЛЕЙ V-XV ВЕКОВ

ВОСКАНЯН ШОГИК

Профессор Общеуниверситетской кафедры профессионального образавания и прикладной педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук

Воспитание, его цель и задачи, вопросы роли и значения воспитания в процессе развития человека и общества во все времена находились в центре внимания представителей интеллигенции, национальных деятелей и высокого духовенства. В разные периоды развития общества эти вопросы решались по-разному и толковались с разных точек зрения. Все события общественной жизни, классовые противоречия и, в целом, любые изменения влияют на воспитание, способствуя его изменению и преобразованию. Это значит, что параллельно с видоизменениями жизни, преобразовывается и сфера воспитания.

В исследуемый период доминирующим укладом жизни в Армении был феодализм. Следовательно, официальное воспитание содержало в себе все черты, свойственные клерико-феодальному образованию.

PHILOSOPHICAL AND ANTHROPOLOGICAL BASES OF EDUCATION IN THE OPINIONS OF ARMENIAN MEDIEVAL THINKERS (5TH – 15TH CENTURIES)

SHOGHIK VOSKANYAN

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Chair of Professional Education and Applied Pedagogy,
ASPU after Kh.Abovyan

Education, its purpose and goals, its role and importance in the process of human and social development have always been paid a great attention by intellectuals, national figures and high rank clergymen. At diverse stages of the society development, these issues were dealt with in different ways and interpreted from different points of view. All events of social life, class contradictions and, in general, any kind of changes affect the education and lead to its modification and transformation. That is to say that alongside with the life changes, education sphere is being transformed as well. During the studied period the dominating social structure is Armenia was feudalism. Subsequently, the official education must have had all the traits proper to clerical and feudal education.